Օրերս կալանավորված քրեական հեղինակություն Տույը դեռեւս ցուցմունք չի տվել եւ դիրքորոշում չի հայտնել իրեն առաջադրված մեղադրանքի վերաբերյալ: Այս մասին մեզ հետ զրույցում ասաց քրեական հեղինակության փաստաբան Երեմ Սարգսյանը:

Ի դեպ, Տույին մոտ կանգնած մեր աղբյուրների փոխանցմամբ՝ վերջինս շատ մտերիմ է եղել Երրորդմասցի Լյովիկի հետ եւ չէր կարողանում ոչ մի կերպ «մարսել» ընկերոջ հետ կատարվածը:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

ԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑՐԵՑ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ, ԹԵ՛ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԸ


Օրերս Արարաթի մարզի գազալցակայաններից մեկում փղամարդու՝ նույն գազալցակայանի աշխատակցի կախված դի էին հայտնաբերել: Ըստ մամուլում շրջանառվող լուրերի՝ 40-ամյա փղամարդը խնդիրներ է ունեցել գազալցակայանի փնթեղի հետ: Վերջերս էլ գազալցակայանի մոտ շահումով խաղերի ապարարներ են տեղադրվել, ինչը դարձել է ոչ միայն ամբողջ գյուղի ու անցորդների, այլև լցակայանի աշխատակիցների, գլխավորապես՝ Յուրայի սիրելի զբաղմունքը: Նա օրեր շարունակ մեծ գումարներ է փարվել, վիճակն այնքան է վատացել, որ վերադարձը հրահանգել է այլևս աշխատանքի չգալ:

Այս ամենը կապ ունի՝ ինքնասպանության հետ՝ փորձեցինք պարզել նախ Հայաստանի գյուղի գյուղապետ ԲԱԼԱՅԵՎ ՍԱՐԿԻՍՅԱՆԻՑ: Նա մեզ հետ զրույցում ասաց, որ չնայած մտերիմ հարաբերություն չի ունեցել հանգուցայի հետ, սակայն գիտի, թե «ինչը հասցրեց նրան ինքնասպանության. գլխից դուրս պարզեցրեց»:

Կոնկրետ եղ ընտանիքի հետ չեմ շփվել, առավել ես՝ այդ խաղամուլ, ավելի ճիշտ խաղալու հետ սեր ունեցող տղայի հետ: Եղ խաղալու հետ սերը իրեն հասցրեց բաժանման, ունի երկու անչափահաս երեխա: Ինքը տարբեր տեղերում խաղում էր, հետո կրվում ու գալիս տան եղած-չեղածը ծախում: Բայց մի պարտքը չէր հասցնում փակել, որ մյուսն էր ստեղծում: Ապրում էր մոր հետ. մայրն էր պահում իրա երեխանին:

- Ո՞ւմ էր պարտք, խաղատներում էր խաղում, թե՛...
- Ասում են՝ կազինոյում էլ էր խաղում, խաղային ապարատներից էլ խելքը իրա՛նը չի եղել. որտեղ ապարատ էր տեսնում, սկսում էր «ստավկա» անել, ու վատն այն է, որ ամեն անգամ կրվում էր:

- Դեպքի օրը տոնյակ էր, թե ինչ է եղել:
- Ատույզ ասել չեմ կարող, բայց ինձ հասած լուրերի համաձայն՝ նա վերջին օրերին գազալցակայանի ապարատով խաղալիս բավական մեծ գումարներ էր կրվել: Հա իրեն գոռուցրել են, որ չչարունակի խաղալը: Ասում են, որ նույնիսկ գազալցակայանի տնօրենը իրեն արգելել է մի քանի օր գործի գնալ, ասել է՝ գնա մի քանի օր հանգստացի, խելքդ գլուխդ հավաքի, հետո կգաս: Բայց ինքը, ըստ երեւույթի, եղպես էլ խելքի չգալով, հաջորդ օրը, անկախ տնօրենի ասելուց, գնացել է գործի: Եղ օրն էլ, ասում են՝ գազալցակայանի ամբողջ օրվա գումարը կրվել է, իսկ առավոտյան արդեն, նրան կախված են գտել: Չգիտեմ, երեւի անհույս է եղել, մտածել է, որ էլ ելք չունի: Դուք չեք պատկերացնում հիմա իր ծեր



ցի, որ նման ձեւով պետք չի շարունակել: Կոպտեց, ասեց՝ ես, իմ կյանքը:

«ՄԱՍ ԶԱՆ, ՕԳՆԻ, ՊԱՐՏԵՐԻՍ ՏԱԿԻՑ ԶԵՄ ԿԱՐՈՒՄ ԴՈՒՍ ԳԱՍ»

Մենք փորձեցինք զրույցել նաեւ որդեկորույս մոր՝ տիկին ԲԵԼԼԱՅԻ հետ, ով մեզ հետ զրույցի ընթացքում մի վայրկյան անգամ հուզմունքը զայել չկարողացավ.

- Այս ես ինչ ասեմ, Դուք, որ գաք, տեսե՛ք՝ մենք ինչ պայմաններում ենք ապրում. տղուս համար ամենը, ինչ հմարավոր էր ծախել, ծախեցինք: Դեպքից մի քանի օր առաջ եկավ, ասեց. «Մամ քան, օգնի, պարտքերիս տակից չեմ կարում դուրս գալ»:

Ինչքան ունի ունեի տվեցի, ասեցի՝ բայց չան, քեզանից թանկ իմ համար ոչ մեկը չկա, տար, ծախում ես, գրավ ես դնում, ինչ ուզում ես արա, մենակ որեւէ մեկը չգա, ասի՝ պարտք ես: Դեպքի օրն էլ համագիտ գնաց գործի, բայց տեսաք ինչ արեց, ինչ սեւ բերեց իմ գլխին: Հա, ինքը խաղալու սեր ուներ, բայց ով կմտածեր, որ մի օր հենց ապարատների պատճառով կյանքին վերջ կտար, երկու երեխան էլ որը կթողեր: Տեղից էլ ես իրեխեքի կյանքը կյանք չէր:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԸ ՄՇԱԿՎՈՒՄ Է ԿՐԱՍՏԱՆՈՒՄ

Թեմայի սկիզբը՝ թիվ 77-ում

Եվ այսպես՝ վրացական աղբյուրները պարբերաբար պնդում են, թե՛ Հայաստանից ոսկու հանքանյութը «մեծ մասամբ դուրս է հանվում արտասահման եւ մասնավորապես՝ Վրաստան եւ այնտեղ մշակվում է Մադնեուլի լեռնահարստացման կոմբինատում»: Խոսքը առաջին հերթին հայաստանյան առանցքային՝ Սոթքի հանքավայրի պաշարների մասին է: Իսկ Մադնեուլի լեռնահարստացման կոմբինատի հետ Սոթքի կապերի մասին նույն աղբյուրները բավականին հեղաքրքիր մեկնաբանություն են փախս:

Բայց մինչև Մադնեուլի կոմբինատին հասնելը, նախ հիշեցնենք որոշ պատմական փաստեր: Դեռ խորհրդային տարիներին մշակվող Սոթքի հանքավայրը, ըստ տարածված վարկածի, այն ժամանակներում միութենական զանգարան տարեկան փոխանցում էր մոտ 3 տոննա ոսկի: 1976թ.-ից Սոթքի եւ Մեղրաձորի հանքաքարը մշակվում էր Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում: Թե հետխորհրդային տարիներին ինչ դրամատիկ ճանապարհ անցավ հանքավայրն ու այդ ֆաբրիկան, քանի տները փոխեց, ինչ ավանտյուրիստական ու թալանային պատմություններ կապվեց դրա հետ, բազում անգամներ է խոսվել: Կոնկրետ թալանային բնույթի փաստեր էլ են հիշել, այն էլ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից: Բայց այդքանից հետո էլ այս հանքավայրը, մեղմ ասած, ամենեւին էլ հայաստանյան տնտեսության ամենաթափանցիկ կառույցը չէ:

Այսպիսով՝ թե 1996թ.-ին այս ողջ համալիրի մասնավորեցումից հետո ինչ ծավալի հանքաքար է արդյունահանվել, ինչքան ոսկի է ստացվել, նույնիսկ մոտավոր տվյալներ չկան: Ի դեպ, մերթնդները միայն այս կարգի թվեր են հնչում, թե Սոթքի 1 տոննա հանքաքարը պարունակում է 5-7 գրամ ոսկի: Բայց չնոռանա՞ք, որ ոստիկանությունը քանիցս հաղորդագրություններ է տարածել մի քանի տասնյակ կամ հարյուր կիլոգրամներով հանքաքար գողացողներին բռնելու մասին, եւ այդ դեպքերի առյուծի բաժինը վերաբերում է հենց Սոթքին: Ուրեմն, եթե մի տոննա հանքաքարից հազիվ 5-7 գրամ ոսկի են հանում, ապա հարյուր կիլոգրամներով հանքաքար գողացողները, այսինքն՝ լավագույն դեպքում մեկ-երկու գրամ ոսկու համար նման ռիսկի գնացողները խելապալանների են նմանվում: Բայց հակված չենք մտածել, որ Սոթքի բնակչության շրջանակ-

ներում մարդկանց զանգվածային խելագարության համաճարակ կա, այսինքն ավելի տրամաբանական է, որ իրականում գործ ունենց հանքաքարում ոսկու շատ ավելի պատկառելի պարունակության հետ:

Հանքավայրում ոսկու լուրջ պաշարների մասին է վկայում նաեւ հետեւյալ փաստը: Երեք-չորս տարի առաջ ՀՀ վերահսկիչ պալատը Սոթքի եւ Մեղրաձորի հանքավայրերի շահագործման իրավունքը ստացած ժամանակագրական առումով վերջին ընկերությանը՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդը»-ին մի շարք լրջագույն մեղադրանքներ ներկայացրեց: Մասնավորապես, որ հանքավայրերը ձեռք բերելուց հետո՝ մինչև 2010թ., այսինքն՝ 3 տարում. «Սոթքի հանքից Արարատի կորզման ֆաբրիկա է առաքել 648 հազ. տոննա ապրանքային հանքաքար, որտեղ ոսկու քանակը կազմել է 2031 կգ: Ֆաբրիկայում վերամշակվել է 656 հազ. տոննա հանքաքար, որի մեջ ոսկու քանակը կազմել է 2026 կգ, կորզվել է 1214 կգ ոսկի, կորզումը կազմել է 59.89%, որը շուրջ 22.6% ցածր է նախագծով նախատեսված 82.5% ցուցանիշից (պետք է կորզվեր 1672 կգ), այսինքն՝ շուրջ 458 կգ-ով պակաս է կորզվել»: Միաժամանակ, որ նույն ժամանակահատվածում իր հարկային պարտավորությունները, մեղմ ասած, համապատասխան չափով չի կատարել: Սակայն այս ամենին զուգահեռ դուրս լողաց մեկ ուշագրավ տեղեկատվություն է: Նախ, որ օձշոնային գոտում Կայմանյան կղզիներում գրանցված «ԳեոՊրոՄայնինգ Գոլդը» հանդիսանում է իր հերթին օձշոնային եւ «անհայտ» տները ունեցող (այս մասին տարբեր վարկածներ մինչ օրս էլ պարբերաբար շրջանառվում են շատերի թվում շոշափելով նաեւ Ռոբերտ Քոչարյանի եւ Միխայիլ Սահակյանի անունները, ովքեր 2007թ. Սոթքը «ԳեոՊրոՄայնինգ Գոլդի» կողմից ձեռք բերելու պահին Հայաստանի եւ Վրաստանի նախագահներն էին) «Ֆրաք Դայմաթի Մայնս Արմենիա» ՍՊԸ-ի սեփականությունը: Այս

սեփականատերն էլ, 2010թ. կեսերին գրավադրել է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդը» 250 մլն դոլար վարկի դիմաց: Գրավադրման այդ խուճուճ պատմությունն ինքն իրենով մի առանձին ու միանգամայն ուշագրավ թեմա է, առավել եւս, որ այդ 250 միլիոնի հետքն անգամ հետագայում չէր եւաց. իր հերթին բավականին առեղծվածային «Նեւա-Ռուս» ընկերության կողմից «ԳեոՊրոՄայնինգ Գոլդի» ձեռքբերման պատմությունը ջնջեց այդ բոլոր հին հետքերը:

Սակայն մեկ բան հաստատ է. այդ 250 միլիոն դոլարը միանգամայն ռեալ փողեր էին, եւ, ենթադրաբար, «ԳեոՊրոՄայնինգ Գոլդի» հին տներն առնվազն այդքան գումար ստացան ընկերության վաճառքից: Բայց այդ վաճառք ավանդ առաջին հերթին վերաբերում է մեր պետությանը պատկանող Սոթքի հանքավայրի շահագործման իրավունքին, այսինքն այդ իրավունքը մեկը մյուսին քանիցս փոխանցելու փուլերում ոչ Հայաստանը եւ ոչ էլ ոսկու արդյունաբերությունը որեւէ խեր չտեսավ: Միայն այդ փաստը հուշում է, թե Սոթքի հանքավայրի մասնավորեցումն ինչ կարգի հանցանք էր պետության նկատմամբ:

Սակայն այդ 250 միլիոնի մասին հիշեցինք մեկ այլ պարզ հանգամանք ընդգծելու համար. եթե կա բան, որը նման կասկածելի իրավիճակում 250 միլիոն դոլար վարկ է տալիս «ԳեոՊրոՄայնինգ Գոլդի» բաժնետոմսերի ամբողջական փաթեթի դիմաց, ապա դա մեկ անգամ եւս ապացուցում է, թե իրականում ինչ հարուստ ու եկամտաբեր հանքավայրի մասին է խոսքը:

Բայց մինչև Մադնեուլի կոմբինատի թեմային, հայկական հանքաքար գնացել է այդ ձեռնարկություն: Վրացական աղբյուրները այդ ընկերության հետ կապված մեկ ուշագրավ հանգամանք էլ են ընդգծում. «Մադնեուլի ԼԳ-ն 2005թ. ձեռք է բերել «ԳեոՊրոՄայնինգը»: Արժե՛ հիշեցնել, որ այդ պահին Սահակյանի արդեն մոտ մեկուկես տարի է զբաղեցնում էր Վրաստանի նա-



Խագահի պաշտոնը եւ արդեն սկսել էր սեփականության վերաբաշխման ակտիվ գործընթաց:

Փաստը, որ Մադնեուլի կոմբինատը այդ տարիներից ի վեր է պետ ավելացրել է իր ոսկու արտադրության ծավալները, արդեն իսկ հուշում է, որ Հայաստանից հանքանյութի մեծ քանակություններ ստացել է. հարավկովկասյան տարածաշրջանում ոսկու հիմնական պաշարները հենց Հայաստանում են, այսինքն Վրաստանում Մադնեուլի կոմբինատի արտադրական ծավալներին համապատասխան հունք պարզապես չկա:

Բայց կա մեկ կարեւոր հարց եւս. հայաստանյան հանքաքարը շարունակո՞ւմ է գնալ Վրաստան, թե այդ ամենը հին պատմություններ են: Եվ ահա վրացական աղբյուրները նման տվյալ են ներկայացնում. «Այն մասին, թե ինչ մասշտաբների են հասնում Վրաստան հանքաքարի ներմուծումն ու վերակաշակումը, վկայում է արտաքին առևտրի մասին Վրաստանի պաշտոնական վիճակագրությունը: Համաձայն դրա՝ 2014թ. հանքանյութի եւ խտանյութի ներմուծումը կազմել է 165.2 միլիոն դոլար. պաշտոնապես զրեթե ողջ ներկրումը Հայաստանից է»: Ավելին. «Հանքաքարի ներմուծման արժեքը կարող է խիստ նվազեցնված լինել, քանի որ ոսկու հանքանյութը Հայաստանից գալիս է համեմատաբար էժան պղնձի խտանյութի անվան տակ»:

ԵՐՈՐ ՍԱՐԳՅԱՆ
(Թեման կշարունակենք մեր հաջորդ համարում)



ԻՆՉ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՆԻ ՀԵՏ ՎԵՑՅԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Ինչե՛ն է չնայած համաձայնագիրը դեռ մոտ է ստորագրվել եւ ուժի մեջ մտնելու համար դեռ որոշակի ընթացակարգ պետք է անցնի, սակայն այս պահին էլ Իրանի հետագա շարժի հետ կապված՝ մասնագիտական ենթադրությունների պակաս չի զգացվում: Եվ որպես գերիշխող տեսակետ՝ շրջանառվում է այն վարկածը, որ այս համաձայնագիրը խոշոր հաշվով չի փոխի Իրանի քաղաքականության հակամերկայան բնույթը: Դրանում, անշուշտ, մեծ տրամաբանություն կա:

րող հին թշնամու այդ ռազմատենչությունը եւ դրանից ակնկալվող հետեւանքները չտեսնել: Մասնավորապես ամերիկյան ընտրությունները սարերի ետեւում չեն, որից հետո, անկախ այս համաձայնագրից, Վաշինգտոնը հաստատ Իրանի հետ հարաբերությունները երբեմնի ռազմատենչ մակարդակին հասցնելու համար հաստատ պատճառաբանությունների պակաս չի զգա: Ուստի եւ Թեհրանն էս գլխից է սկսելու անվտանգության միջոցառումները: Առաջինը Իրանի համար պատվար դարձած Սիրիայի կայունությունն է, ապա՝ Իրաքի: Եվ եթե հաջողվի արագորեն ստեղծել կայուն Իրան-Իրաք-Սիրիա առանցքը, ապա դա կդառնա անվտանգության բավարար երաշխիք: Ընդ որում այդ խնդիրները լուծել առանց Ռուսաստանի եւ Չինաստանի քաղաքական եւ ռազմական աջակցության, գրեթե բացառվում է: Բացի այդ՝ տեսական դադարից հետո Իրանը նաեւ էներգակիրների համաշխարհային շուկա վերադառնալու խնդիր ունի, եւ այս հարցում կայացման փուլ մտած ԲԻԿԿ-ն է «Շանհայյան համագործակցության կազմակերպություն» (ՇՀԿ) ուղղվածությունը, այսինքն չինական եւ հնդկական առեղծված շուկաները լավագույն տարբերակներն են. հակառակ դեպքում կմնա եվրոպական շուկաների համար ծանր մրցակցության մեջ մտնելու տարբերակը, այն էլ՝ ռուսների հետ

ԱՐՏԱՐԻՆ

րավորինս ծայրահեղ իսլամատյաց նախագահով փոխարինելու վրա, իսկ այդ դերին լավ համապատասխանում է ռազմատենչ ու հատկապես՝ Մերձավոր Արեւելքում պատերազմների մեծ գիտակ բուշերի դիմատիպի ներկայիս թեկնածուն Ջեք Բուշը:

հարաբերությունները վատթարացնելու գնով: Գումարած դրան պարսկական փուլ է մտնում նաեւ չինական «Մետաքսի ճանապարհը», որի առանցքային ուղղություններին մեկ կարող է դառնալ Չինաստան-Հնդկաստան-Եվրոպա առանցքը: Միաժամանակ բավականին արագ տեմպ է տված նաեւ ԵՏՄ-ի հետ համագործակցության ծրագրերին:

Արդյունքում ամերիկյան աշխարհաքաղաքական ուղղությունից կա սպասվող վտանգ, ու դրա փոխարեն՝ անվտանգության երաշխիքների եւ տնտեսական համագործակցության առումով՝ մեծ ակնկալիքներ ԲԻԿԿ, ՇՀԿ եւ ԵՏՄ համակարգերից: Ընդ որում, նման ընտրությունը ձեռնառն է նաեւ Երանով, որ այստեղ գործում են փոխադարձ շահեր: Այսինքն Իրանի կայունությունը միաժամանակ ձեռնառն է Ռուսաստանին, Չինաստանին եւ Հնդկաստանին: Ռուսների համար Իրանը Հնդկական օվկիանոս դուրս գալու, ԲԻԿԿ-ում եւ ՇՀԿ-ում իր մեծությամբ երկրորդ գործընկեր Հնդկաստանի հետ կապի միջանկյալ օղակ է: Չինաստանի եւ Հնդկաստանի համար Իրանը ոչ միայն էներգակիրների կայուն աղբյուր է, այլ՝ «Մետաքսի ճանապարհը» եվրոպա հասցնելու կայուն ուղի: Գումարած դրան Իրանը մի կողմից կասեցնում է պանթրոնիստական գաղափարախոսության անցումը Թուրքիայից դեպի արեւելակասպյան գոտի ու Չինաստան, մյուս կողմից միջոց է Պակիստանին ամերիկյան ազդեցությունից եւ ծայրահեղ իսլամիզմից հնարավորինս հեռու պահելու համար, որն էլ իր հերթին է մեծ ծառայություն Հնդկաստանի համար:

Արդյունքում, թե տրամաբանորեն Իրանի վերջնական ընտրությունն աշխարհաքաղաքական ո՞ր ուղղվածության վրա է կանգ առնելու, թերեւս նույնիսկ կանխորոշ-

ված կարելի է համարել: Եվ նկատենք, որ եվրասիական քաղաքական ուղղության վրա Իրանի շեշտադրումը նաեւ Հայաստանի համար է լավագույն տարբերակը: Այն առումով, որ հիշատակված բոլոր համատեղ տնտեսական ծրագրերն այս իրավիճակում շաղկապվում են նաեւ ԵՏՄ-Իրան համագործակցության հետ՝ կյանքի կոչվելու էլ ավելի մեծ հավանականություն ձեռք բերելով: Այնուհետեւ. գաղտնիք չէ, որ կա Ռուսաստան-Իրան կոմունիկացիոն կապը նաեւ Ադրբեյջանով տանելու տարբերակ: Սակայն փաստն այն է, որ տեսական ժամանակ այդ ծրագրերը հայտնվել են մեռյալ վիճակում՝ Իրանի եւ Ադրբեյջանի բավականին ծանր հարաբերությունների պատճառով: Ընդ որում՝ հարաբերությունները հստակեցնելու փորձեր թեւեւ քանիցս եղել են, սակայն ունենք ներկայիս ծանր վիճակը: Այսինքն քանի դեռ Ադրբեյջանը Իրանի հյուսիսային հատվածը համարում է իր պապեմական կալվածքը, Թեհրանը միշտ էլ իր գաղափարները պաշտպանելու է: Իսկ Բաքուն էլ ունի այն խնդիրը, որ այդ ցուցադրական հավակնություններից հրաժարվելով պարզապես ստիպված է լինելու վերաշառադրել մի կերպ հորինված իր պատմությունը, ու մեծ հավանականությամբ պարզապես կվերածվի առանց պատմական հիմքերի պետության: Գումարած դրան կա Ադրբեյջան-Թուրքիա «եղբայրությունը», որի պարագայում Ադրբեյջանին մոտ հնարավորություններ տալը Թեհրանի համար հավասարազոր է սեփական դարավոր մրցակցի օգտին խաղալուն:

Մի խոսքով՝ իրանական համաձայնագիրը Հայաստանի համար միանգամայն նպաստավոր իրավիճակ է ստեղծում: Իսկ թե ինչքանով կկարողանանք դրանից օգտվել, դա արդեն մեզանից է կախված:

ԵՐՈՐ ՍԱՐԳՅԱՆ

«ԱՅՍՕՐԿԱ ՄԵՐ ԱՐԱՐՔԸ ՈՒՂՂՎԱԾ Է ԹԵ՛ ԱՆՑՅԱԼԻՆ, ԹԵ՛ ՎԱՂՎԱ ՕՐԿԱՆ»

«Իրավունք» թերթի «Ուղիղ կապ» խորագրի հյուրը 33 ժողովրդական արտիստ, անվանի կոմպոզիտոր ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԸ էր: Մասնավորապես ուղղված հարցերի շրջանակը խիստ լայն էր՝ սկսած շաբաթներ առաջ Բաղրամյան պողոտայում սկիզբ առած ցույցերից մինչև մանսուրյանական սրբեկոթաբնակարանների մանրամասները:

«ԶԿԱ ՈՐԵՎԷ ԵՐԵՎՈՒՅԹ, ՈՐՆ ԻՐ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՎԸ ՉՈՒՆԵՆԱ»

— Շատ անհանգստացած եմ երեւանյան իրադրություններից՝ օրեր շարունակ սուսեր էլ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ կազմակերպված ցույցերից: Զեր պես մտավորականները պետք է խաղաղեցնեն ժողովրդին, ղեկավարությամբ: Խնդրում եմ ասեք, թե ինչ իրավիճակ է այդտեղ տիրում (ՄԱՔՍՈՒՐՅԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ, ԼՂ):

— Պետք է ասեն, որ այստեղ լավ վիճակ է, որեւէ շփոթ, որեւէ անհանգստության պատճառ չկա: Երկուստեք ասած, այս օրերին Ափյուռքի ողջ տարածքը մեր երեւանյան իրադրությունների հուզումով ապրեց: Շատ գեղեցիկ, բոլորիս միավորող երեւույթ էր: Կարծում եմ՝ երեւույթ, որն ինքնին ինչ-որ մակերեսի վրա էր, այսօր մտել է խորքեր, որովհետեւ պետք է իրավական եւ տնտեսական հաշվարկների միջոցով լուծում ստանա:

— Մենք կողմ ենք, որ պետք է տնտեսական հարցերը բարձրացվեն, բայց միայն թե քաղաքականացնեն այն...

— Չկա որեւէ երեւույթ, որն իր քաղաքական թեւը կամ իր արտահայտությունը չունենա: Այնպես որ, այդ էլ մի սարսափելի բան չէ: Բայց եթե մեր պահանջածը արդար է, ինչու՞ ոչ:

— Պարոն Մանսուրյան, որպես մտավորական, որպես 33 քաղաքացի՝ ինչ կասեք էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ սկսված շարժման մասին: Արդյոք երիտասարդները հասան իրենց նպատակին (ՌՈՂԱ տատիկ, ծնունդով Դսեղից):

— Կարծում եմ, որ հասան: Դարձրել են հաշվով բարձրացված է ողջ աշխարհով մեկ: Ոչ միայն աշխարհի հայերս, այլ առհասարակ որոշ կենտրոններ մույնպես տեսան, որ բաներ կան, որոնք այլևս պետք է ուղղել: Ի վերջո, հարցը բարձրացնելն ինքնին հարցի լուծման ամենակարեւոր եւ առաջին քայլն է:

— Մեր ժամանակվա եւ այսօրվա երիտասարդության միջեւ ինչպիսի՞ նմանություններ եւ տարբերություններ եք տեսնում:

— Շատ եմ սիրում մեր երիտասարդությանը: Մեր ամենագործարար ուժը, մեր ապագան այս երիտասարդներն են, մանավանդ նրանք, ովքեր հայոց լեզվին եւ հայ տան ավանդույթներին ամուր կառչած են: Եվ մեծամասնությունը հենց այդպիսին է: Ովքեր գիտեն հարգել օտար լեզուները, նրանք էլ են մերը: Արդյունքում լավ սերունդ ունենք: Քանի գնում սերնդեսերունդ մաքրվում է մեր ոգու արտահայտությունը, քաղաքակրթության նորանոր շերտեր է մեզ մոտ մուտք գործում: Տասնամյակը մեկ քայլ է տեղի ունենում այս ուղղությամբ, ինչն ինձ շատ է ուրախացնում: Ինչ վերաբերում է մեր սերունդին, մենք էլ վատ չապրեցինք, լավ երիտասարդություն ունեցանք: Բայց մերն ուրիշ էր, այսօրվանը բոլորովին այլ է: Այն ժամանակ, եթե դու այստեղից Մոսկվա էիր հասնում, կնշանակեր, որ դու հասար աշխարհի կենտրոն, եւ այն մեր ամենահեռու սահմանն էր կամ ամենաբարձր կետն էր: Այսօր երիտասարդներն այնքան ուրիշ տեղեր ունեն գնալու, սովորելու, յուրացնելու, չափվելու, իրենց կարողությունները տանելու: Այսօր ունենք շատ երաժիշտներ, որոնք աշխատում են օտար նվագախմբերում, ինչքան պարողներ կան, որ աշխատանք են գտել այնտեղ, արվեստի մարդիկ կան, որոնք սովորում են արտասահմանում: Այնպես որ, կյանքը սովորեցրել է, որ միշտ, երբ մեկը տարիքն առնում է, իր համար իր երիտասարդությունն ավելի գեղեցիկ է, քան այսօրվանը, բայց պետք է թունամայրական իմաստուն մեծ խոսքը կրկնել: «Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք»:

— Մասնորո, հիրավի Զեր խոսքը ծանրակշիռ է հայության համար, ուստի՞ որպես կյանքի մեծ փորձ ունեցող անհատ, ինչ խորհուրդ կտաք հայ երիտասարդներին (ՀԱՍՄԻԿ ՄՈՒՆԵՐՅԱՆ, ք. Սարտուկ):

— Հավատարիմ մնալ ընտանիքին, տան ավանդույթներին: Մենք՝ կյանքի ճանապարհ անցնողներս, պետք է լավ գիտակցենք, որ այսօրվա մեր արարքը ուղղված է թե՛ անցյալին, թե՛ վաղվա օրվան: Դեռեւաբար, այնպես պետք է ապրենք այս օրը, որ վաղը չցավենք՝ մեր բաց թողածի համար:

Երիտասարդը թռիչքի պահանջ ունի, նոր աշխարհներ ճանաչելու, նոր իրականություն մտնելու, սովորելու, եւ սա շատ բնական է: Բայց պետք է սա կարողամաս գուցակցել արմատներիդ հետ կապված մնալուն: Սա շատ կարեւոր է, որպեսզի վաղը՝ իմ տարիքին հասնելուց հետո, փորձեն ի մի բերել անցած կյանքը: Զցավենք, որ այստեղ սխալվեցինք, այնտեղ տանուլ տվեցինք, երկար ժամանակ վատնեցինք: Պետք է ճիշտ ապրել ու միաժամանակ թռիչքի կարողությունն իր հետ տանել ողջ կյանքի ընթացքում: Առաջ շարժվելու, նոր սովորելու, նոր յուրացնելու կյանքի երկու թելերը սրանք են: Եվ սրա մեջ պետք է մեզ զգանք ուժեղ: Ներդաշնակ ապրելու պայմանով է մեր ուժը, մեր կյանքը իմաստավորվում:

iravunk.com

Ամբողջությամբ կարդացե՛ք կայքում:



«ՍԱ ԿՈՎԻ ԲՈՒՆ ԶՊԵՏԷ Է ԴԱՐՁՆԵԼ»

— Մեր «հարեւանները»՝ Թուրքիան եւ Արդեշանը, մեր երգն ու երաժշտությունն անընդհատ փորձում են իրենցով անել: Այդ առումով, որպեսզի լինի այն անհրաժեշտ քայլը, ինչը կկոչվի մշակութային հաջողված քաղաքականություն (տիկին ԳՂԱՐ, ք. Երեւան):

— Շատ հետաքրքիր հարց է՝ տարբեր կողմերի, տարբեր բնագավառների հետ կապված: Մշակույթն այնպիսի բան է, որ չի բաժանվում սահմանների մեջ ու դառնում այս կամ այն ժողովրդի սեփականությունը: Մենք էլ ենք սիրում ուրիշ երկրների գեղեցիկ յուրացնել, եթե դրան համարժեք գործ ստեղծելու հնարավորություն ունենք: Շատ լավ երգեր ունենք, որոնք օտարածին են՝ օրինակ, «Ծիծեռնակը» հայկական երգ չէ, այլ մոլդովական է, կամ «Հինգալան», որը նույնպես օտար ծագում ունի...

Իհարկե, գիտեմ, որ հիմա մեր երգերից էլ կան, որ մեր «հարեւանները» ասում են, թե այն իրենցն է: Ինչ-որ ձեռով պետք է պնդենք, որ արմատներն այստեղից են, բայց որ դուք էլ եք հավանում, լավ եք անում: Ես այդպես եմ կարծում, ու սա կովի բուն չպետք է դարձնել: Երգը, ուղղակի, ազգերի միջեւ բարեկամության, փոխադարձ վստահության, փոխադարձ հարաստացման միջոց է: Եթե այն կարողանում է մեզ իրար հետ ապրեցնելու հույս տալ, լավ է, որ լինի, բայց ոչ թե դառնա բաժանարար գիծ: Այլ բան է, որ պետք է պատմականորեն ճիշտ ցույց տանք տվյալ ստեղծագործության արմատները՝ թե որ շրջանն է, որ դրան է, ինչու է մերը: Այսինքն՝ գիտական քաղաքականությունը տանք եւ ասենք՝ լավ եք անում, որ դուք էլ եք սիրում:

ՀՐԱՆՏ ՍԱՐԱՅՅԱՆ

ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՀԻՄԱ ԷԼ՝ ՇԱՏ ԲԵՐՔԻ ԶԵՂՔՆ ԵՆ «ԿՐԱԿՆ ԸՆԿԵԼ»

Չնայած այս փարի բերքը բավական առաք է, եւ գյուղացիները «հակառակ կողմից» են բողոքում, որ մթերոլները չնչին գներ են առաջարկում: Հաշվի առնելով, որ ցածր գներից ինչ-որ չափով օգտվում են քաղաքի բնակիչները, շրջանցե՛ք այդ դժգոհությունները: Չնայած՝ այս կարգի կրպնդները դեռ կշարունակվեն, հաշվի առնելով, որ մթերման գների հեղափոխված լուրջ մրահոգություն ունեն նաեւ խաղողագործները: Նրանք եւս փաստում են, որ առաք բերք է սպասվում, բայց թե ով կմթերի եւ ինչ գներով, հայրնի չէ: Այս իրավիճակի շուրջ փորձեցինք զրուցել 33 գյուղատնտեսության նախարարի փոխարկալ ՌՈՒՐԵՏ ՄԱԿԱՐՅԱՆԻ հետ:



րամշակողներին: Երեւի, գյուղացիների մտահոգությունը հենց էս վերջին տեսակի բերքի շուրջ է, եւ մենք էլ ենք բողոքներ ստացել այն գյուղացիներից, ովքեր չեն կարողանում իրացնել, պայմանավորաժողովներ, պայմանագրեր չունեն, սակայն նրանց եւս մենք ուղղորդել ենք գործարաններ: Պարզապես, գյուղացիները ակնկալիք ունենին, որ կարկտահարված բերքը կարող էին անցած տարվա պես վաճառել բարձր գներով, բայց հիմա ստիպված են հանձնել 50-60 դրամով, ինչը, կապված բերքի ծավալների հետ, բնական է:

— Լայն հիշեցնեմ, որ գյուղմթերքը իրացվում է երեք ուղղություններով՝ արտահանում, վերամշակում եւ ներքին շուկայում վաճառք: Արտահանման առումով թվերը խոսուն են. այսօրվա դրությամբ մենք արտահանել ենք ավելի քան քառասուն հազար տոննա թարմ պտուղ-բանջարեղեն: Ապրանքային լավ տեսք ունեցող բերքը գյուղացիներն իրացնում են արտահանողներին բարձր գներով: Միջին ապրանքը վաճառվում է տեղական շուկայում էլ ի համեմատաբար նորմալ գներով: Իսկ, ասենք, կարկտուղ խփած ծիրանը հանձնում են վե-

ինչ վերաբերում է խաղողի մթերմանը, թեւէ նախարարությունը եւս այդ առումով տարեսկզբին լուրջ մտահոգություններ է ունեցել, բայց արդեն այսօր խնդիրը լուծված է: Որեւէ մտահոգություն, մտավախություն թող գյուղացիների շրջանում չլինի, որ խաղողը կարող է հանկարծ մնալ եւ չմթերվել: Բոլոր վերամշակող կազմակերպություններն էլ հավաստիացրել են, որ եթե ոչ ավել, ապա գոնե անցած տարվա ծավալներով կմթերեն: Սյսինքն՝ մենք իրացման խնդիր չենք ունենա:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

ՔԱՂՇԻՆ ԷԼ Է ԱՏԱՄՆԵՐԸ ՄՐԵԼ

Վերջերս բավականին փարփոհակ բողոքներ ենք ստանում մարզերի բնակիչներից: Օրինակ՝ գյուղական փան, ասենք՝ պարզապես, ինչ-որ կից շինություն, նույնիսկ՝ ցանկապարզ կառուցելու համար քաղաքաշինության նախարարության կողմից փուզանվում են: Թե ինչու է բացարձակ վերջ նշվածը 33 քաղաքաշինության նախարարությունը, փորձեցինք պարզել Ճարտարապետության վարչության պետ Ն. Սարգիսյանից, ով մեր հարցին գրավոր պատասխանեց ընդամենը հետեւյալը.

— 33 կառավարության 2015թ. մարտի 15-ի «33-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների եւ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու եւ 33 մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշմամբ սահմանված պահանջների համաձայն. «Քաղաքաշինության գործունեության տեսչական պետական վերահսկողությունն իրականացվում է 33 քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից ձիսկի վրա հիմնված ստուգումների միջոցով՝ օրենքով եւ 33 կառավարության որոշմամբ սահմանված կարգով»:



րակ գյուղացին, դա դեռ մի կողմ: Մենք էլ հասկացանք այս կերպ. անգամ ամենամանր շինարարության համար մարդիկ պարտավոր են քաղաքաշինական բոլոր ընթացակարգերով շինվաններով, շինթույլտվություններով ու շատ այլ «փորձություններով» անցնել՝ «ռիսկի վրա հիմնված ստուգումների» տակ չհայտնվելու եւ կլորիկ տուգանքներ չչափակելու համար: Իսկ այդ ընթացակարգեր անցնելն էլ իր հերթին է բավականին միջոցներ (երբեմն անհրաժեշտ շինանարությունից էլ ավել) եւ ժամանակ պահանջում: Չէ, ավելի լավ է հին ցանկապատով յուլա գնալ:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

ԱՆՎՃԱՐ ՍՏԵՆՎԱՎՈՐՎԵԼ Է 757 ԶԱՂԱՔՅԻ

— Ինչպես հայտնի է Հայաստանի Հանրապետության 2015 թ. պետական բյուջեով սրտի անհետաձգելի վիրահատությունների ծրագրի իրականացման համար հատկացվել է 500 մլն դրամ: Հունվարի 1-ից սրտի ինֆարկտի դեպքում սրտի ստենդարդությունն իրականացվում է անվճար: Մեկ հիվանդի վիրահատությունը մոտավոր հաշվարկներով կազմելու է 700 հազար դրամ: Թե վերը նշված ծրագրից մինչ օրս քանի 33 քաղաքացի է օգտվել, փորձեցինք հետաքրքրվել 33 ԱՆ աշխատակազմի հիվանդանոցային բուժօգնության

քաղաքականության բաժնի պետ Վարդան Վարդապարյանից, ով մասնավորապես ասաց. — Հունվարի 1-ից մինչեւ հունիսի 30-ը ներառյալ, սրտի անհետաձգելի վիրահատություններից օգտվել են թվով 757 քաղաքացի: 448-ը եղել է Երեւանի բնակիչներ, մնացածը՝ մարզերից: Այդ թվում արական սեռի 581 ներկայացուցիչ է իգական՝ 174, միջին տարիքը 63 տարեկան է կազմել: Ծրագիրը միանշանակ արդարացնում է իրեն, քանի որ այն կյանք փրկող ծրագիր է:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

«ՔՆՆԱԴԱՏ ԶԿԱ, ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻՆ ՎԱՂՈՒՅ «ՍԱՏԿԱՅՐԵԼ» ԵՆ»

Ալ. Սպենդիարյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի մենեջերի, ՀՀ Վաստակավոր արտիստ ՊԵՎՈՐԳ ԶԱՎՈՐՅԱՆԻՆ անհանգստացնում է մշակույթում փրկող անհանգստացնող հարկապետ հեռուստաթերթից հնչող երաժշտությունը: Արտիստը «Իրավունքին» պարտք, որ Նույնիսկ երթերից հնչող ոչ դուրեկան երաժշտության համար մի անգամ ստիպված է եղել իր արտասահմանյան հյուրերին ստել, որ դա ոչ թե հայկական, այլ՝ հնդկական հեռուստաթերթ է, չնայած՝ հեղինակը հասկացել է, որ դա հայկական այլք է:

«ՇԱՏ ՔԻՉ ԱՆՈՒՐՆԵՐ ՈՒՆԵՆՔ, ՈՎԷՐ ԱԶՆԻՎ ԾԱՆՈՅՈՒՄ ԵՆ ԱՐԿԻՎ ՏՄԻՆԱՆ»

Ցավոր, ռաբիբո ողորդել է մեր երթը: Շատ կուզեմայի, որ մախկինի նման ամեն ինչ ընկներ իր տեղը, որ մեր թատրոններում ես ունենայից լավ մերկայացումներ, որ դերասանները կարիք չունենան խաղալու էժանագին ֆիլմում՝ գոյատևելու համար: Դրանով կորցնում ենք մեր թատրոնի դպրոցը: Այսօր շատ քիչ անուներ ունենք, ովքեր ազնիվ ծառայում են արվեստին, ինչն ինձ համար՝ որպես հայ մարդու ու մի քիչ էլ արվեստագետի, շատ ծանր է: Անուներ ենք ունեցել, որոնց այսօր շարունակողներ չկան: Եթե ժամանակին ինքս էլ մի քիչ համոզվեի, ես էլ պիտի ռեստորաններում երգեի: Պիտի միասնական լինենք, ու միայն այդ ժամանակ կարող է հայ արվեստը, հայ մշակույթը հաղթել: Սա գուցե դուրսից է արվում: Երբ գերմանացիները Լեհաստանը գրավեցին, մարդ չսպանեցին՝ փակեցին բոլոր մշակութային օջախները: Երբ Հոմերի Հոմերոսն էս Պողոս պապը, ով հետո հայերենով ասաց, որ հայերն առաջին քրիստոնյաներն են, մոտենում է գործերի իրամասնատարին ու ասում՝ ինչո՞ւ եք թատրոնները փակել, մեզ սպանեք ավելի լավ է, քան փակել եք մեր թատրոնները, ասում է՝ ձեզ չենք սպանելու, ձեր միջից ազգային մշակույթը կվերացնենք, դուք կամաց-կամաց կվերանաք որպես ազգ: Եթե այսպես շարունակվի, հնարավոր է, որ դա էլ սպառնա մեր ազգին:

«ՑՈՒՅՑ ՏԱՆ, ՈՐ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ Է, ՔԱՆ ՌԵՏՏՈՐԱՆԸ»

Քայց այսօր, կարծես թե, դասական արտիստներն ավելի շատ առաջին պլանում են, քան՝ տարիներ առաջ, երբ շոու-բիզնեսն էր տիրում դաշտը: Դրա մեջ մեծ ներդրում ունի մեր երկրի նախագահի ու առաջին տիկինը՝ իրենք շատ լուրջ աջակցում են դասական երաժշտությանը: Եթե մեր պետական այրերը հետևեն նախագահի օրինակին եւ հաճախ լինեն դասական երաժշտության համերգներին, ցույց տան, որ դասական երաժշտությունն ավելի կարելու է, քան ռեստորանը, արդեն ամեն ինչ ճիշտ կընթանա: Համոզված եմ՝ այն մարդը, ով բացարձակ գաղափար չունի դասական երաժշտությունից, 2-3 անգամ իրեն ստիպելով գա համերգի՝ 4-րդ անգամ ավելի

հաճույքով կգա:
- **Խոստովանենք, որ Նախկինի նման հանդիսատեսի շարքերում այլևս չկան հորակող պաշտոնյաներ:**

- Այո, դրանում հենց նախագահը աջակցեց, կազմակերպեցին բարձր մակարդակի համերգներ, փառատոներ, հրավիրվեցին մեծանուն երաժիշտներ, երգիչներ, ինչը խթանեց մեր երկրում դասական երաժշտության լայն ճանաչմանը: Մենք ունենք շատ անվանի ու տաղանդավոր երիտասարդ դասական կատարողներ՝ Նարեկ Հայնազարյան, Սերգեյ Խաչատրյան, Տիգրան Համասյանը, որ, ճիշտ է, դասական ջազ է, բայց միևնույն է դասական է, եւ շատ այլ դասական կատարողներ:

- **Ճատ արտիստներ բողոքում են, որ մեր սահմանները փոքր են կայանալու համար, ու հեռանում են երկրից...**

- Ինքս էլ կիեռանայի երկրից, եթե չունենայի այն հնարավորությունը, որն ունեն այսօր: Դասական երաժշտությունը, ընդհանրապես օպերային արվեստը, ֆիլմ չէ, որ նկարահանես, ցուցադրես ու պատես անբողոք աշխարհում, եւ քեզ ծանաչեն: Բազմիցս առաջարկներ են ունեցել մնալ եւ աշխատել եվրոպական թատրոններում, բայց դա ինձ պետք չէ, եթե պայմանագիր կնքեմ, կմնամ ու կլինեմ իրենք թատրոնի մենեջեր: Գիշտ է, կունենամ լավ աշխատավարձ, թոչնակ ու ամեն ինչով ապահովված կլինեմ, բայց չեմ կարող գալու գրաֆիկ ունենալ, ինչպես մեր թատրոնում: Մեր թատրոնն ինձ համար իմ տունն է: Ունեմ հնարավորություն՝ դրսում կարճ ժամանակով աշխատելու եւ վերադառնալու, դա ամենաառաջին պատճառն է, որ ես այսօրում եմ իմ երկրում ու ինձ այստեղ ավելի ուժեղ, ամուր ու առողջ եմ զգում:

«ԱՌԱՋԻՆ ՑԱՆԿԱՑՈՒՆԵՐԻՑ ԷՒ, ՈՐ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԼԻՆԻ ԳԵՂԱՐՎԵՏՍԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ»

- **Թատրոնում արդեն գեղարվեստապես կրկին ղեկավար ունեք Գեղամ Գրիգորյանը...**

- Ուրախ եմք, որ մեր գեղարվեստական ղեկավար օպերային երգիչ է եւ օպերային արվեստի առեւտի մեծ գիտակ, երեւի թե միակերպ տարածաշրջանում: Ցավալի է, որ անցած տարիներն առանց նրա է եղել թատրոնը, դրա համար մեր քայլերը եղել են շատ դանդաղ, օրցուց են տեղում դրսից: Ես առաջին ցանկացողներից էի, որ Գեղամ Գրիգորյանը լիներ մեր գեղարվեստական ղեկավարը: Նրա հետ խոսելիս հասկացա,



որ եկել է տրամադրված, մեծ ծրագրերով: Բոլորս նրա կողքին ենք եւ պետք է օգնենք, որպեսզի կարողանա իրականացնել այդ ծրագրերը, որոնք միայն ծառայելու են ի բարօրություն մեր թատրոնի: Համոզված եմ՝ թատրոնը մեծ թափով առաջ է գնալու, որովհետեւ թատրոնում արդեն կան կայացած լավ երաժիշտներ, երգիչներ եւ ունենալու ենք նոր, որակյալ եւ մեր հանդիսատեսին հաճո մերկայացումներ:

«ՄԵՇԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐԸ ՊԱՐԱՊ ԶԼԻՆԵՆ Է»

- **Նախկինում օպերային արտիստներին անհանգստացնում էր աշխատավարձի ցածր լինելը, այսօր կա՞ որեւէ բան, որ խանգարում է աշխատել:**

- Վշխատավարձը եթե նույնիսկ շատ բարձր էլ լինի, միևնույն է, այդ խնդիրը միշտ կլինի: Մարդը միշտ ավելի շատին է ձգտում, դա նորմալ է: Ամենակարելու է մեծագույն խնդիրը, ցանկացած աշխատողի համար, պարսպ չլինել: Երբ անգործ մնաս եւ, մտածում եմ՝ ինչ անենք, եկեք, մեկի դեմ պայքարենք կամ բողոքենք:

«ԱՌՈՂՋ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՐԱՇՏԵՑ Է ԹԱՏՐՈՆԻՆ»

- **Իսկ քննադատներն այսօր ձեզ համար ի՞նչ տեղում են, բոլոր ոլորտներում նրանց բացակայությունն ակնհայտ է:**

- Այսօր քննադատ չկա, քննադատներին վաղուց «սատկացրել» են... Իրենք էլ ճանաչարի չեն թողել, կանչել ու ասել են՝ պիտի այսպես կամ այնպես գրեք: Իրենք էլ են կորցրել մտածելու ունակությունը: Առողջ քննադատությունը անհրաժեշտ է թատրոնին, բեմադրող ռեժիսորին, դիրիժորին, ինչպես արեւի լույսն է ծաղիկին անհրաժեշտ: Բայց այսօր այդ քննադատությունը չկա, եւ չկան այդ քննադատները: Ինչ որ մեկի կողմնասպասություն է վերջ: Ինչը շատ վատ է՝ կործանարար թատրոնի համար:

Հարույր ԼԻԼԻԹ ԵՐԻԱԶԱՐՅԱՆԸ

ԿՐԿԻՆ ԻՆՏՐԻԳ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՇՈՒՐՋ

Ղեռես 5 տարի առաջ Օծուհի Ար. Աստվածածին VI դարի եկեղեցին՝ զմբեթից մինչեւ ի հիմք, 5 ճաքով փլուզման առջեւ էր կանգնած: 2011 թվականին, Մոսկվայում ապրող գործարար, բարերար Մովսես Չավարյանը, 750 հազար ԱՄՆ դոլարով ֆինանսավորել է Օծուհի Ար. Աստվածածին եկեղեցու վերականգնումը, որը սակայն տեւեց 4 տարի: Օրերս բարերարը խոսելով «Օծուհի նոր կյանք» ծրագրի իրականացման մասին՝ ասել է, որ այսօր Օծուհին արդեն վտանգ չի սպառնում, բայց ծրագիրն ամբողջությամբ չի արդարացրել իր սպասումները, ավելին՝ Հայաստանում պետության եւ բարեգործների համագործակցությունը չափազանց անարդյունավետ է, իսկ տեղական էլիտան հանտարբեր է հուշարձանների ճակատագրի անդեպ: Ըստ Չավարյանի. «Միտում կար դիտարկելու Օծուհի վերականգնումը իբրեւ պիլոտային ծրագիր՝ ապագայում Հայաստանի այլ հուշարձաններ եւ վերականգնելու համար՝ մտահոգ մարդկանց ներգրավելով: Սակայն ստիպված էինք գրեթե մեկ տարի սպասել «վերականգնման թույլտվությանը»: Առանց կողմնակի միջամտության, մենք այն հաստատ չէինք էլ ստանա, ուստի ստիպված եղանք միացնել կապերն ու ընկերներին իշխանության բարձրագույն օղակներում: Եվ սա ընդամենը նրա համար, որ հարցը լուծվեր հոգուտ եկեղեցու վերականգնման»,- ասում է բարերարն ու շեշտում. «Վերականգնման ողջ ընթացքում որեւէ հանդիպում չեմ ունեցել մշակույթի նախարարի եւ եկեղեցու ներկայացուցիչների հետ: Չնայած, բազմիցս հանդիպել եմ փոխնախարարին: Ինձ հազիվ թե դա պետք է, սակայն չեմ կարծում, որ Մշակույթի նախարարության ղեկավարները հիմա անուս անհրաժեշտ վերականգնելու ցանկացող մարդկանց ճնշումից: Կարելի է ամփոփել, որ իշխանությունները մտահոգված են այլ խնդիրներով, իսկ հուշարձանների վերականգնումը եւ պոստմոդերնիզմի բարերարների հետ համագործակցությունը թողնված է Աստուծո խոսքին»:

Ինչ վերաբերում է նախարար-բարերար հանդիպմանը, համեմայնդեպս լրագրողներիս համար հայտնի փաստ է, որ 2011 թվականին, երբ մեկնարկում էր ծրագիրը, Մ. Չավարյանն ու ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանը համատեղ հուշարձանի հոլում էր նստում:



Ինչպես, բարերարը շարունակում է իր բողոքն ու իմնական խոչընդոտ համարում Մշակույթի նախարարությանը. «Նախարարության ոչ պաշտոնական հորդորով չէինք ստանում շինթույլտվություն գյուղապետի կողմից: Մշակույթի նախարարի դիրքորոշումն ինձ հասկանալի է, քանի որ աշխատանքներն իրականացնելու մրցույթը հաղթել էր ընկերություն, որն իր «ֆավորիտներին» մեջ չէր, սակայն ինձ համար անհասկանալի է տեղական եւ մարզային իշխանությունների դիրքորոշումը: Խոչընդոտ էր նաեւ անբան կազմակերպությունը, որը կազմել էր նախագիծը (կամ փոխել էր տարբերակը անցյալ դարի 80-ական թվականներին կազմված նախագծում) եւ միաժամանակ պատասխանատու էր ճարտարապետական վերահսկողության համար: Խոչընդոտ էին եկեղեցու եւ հասարակության ոչ կոմպետենտ այն ներկայացուցիչները, ովքեր իրենց առաքելությունը տեսնում էին միայն իրականացվող աշխատանքները ոչ պրոֆեսիոնալ հայացքով ճեմարկետին եւ հնարարյան եկեղեցին ժամանակակից բիզնես-կենտրոնի վերածելու «բարի խորհուրդներ» տալու մեջ: Սակայն նրանք, չգիտես ինչու, չէին փորձում ներգրավել հասարակությանը հուշարձանի վերականգնման գործում: Իրական խնդիր դարձան նաեւ մարդիկ, ովքեր լիազորված էին աջակցել նախագծի իրականացմանը, եւ դրա համար գումար էին ստանում»:

Այնուամենայնիվ, սրանք աղաղակող փաստեր են, թե բարերարն է փուչ աղաղակում, կպարզվի շուտով, իսկ մինչ այդ, թեմայի շուրջ «Իրավունքը» դիմել է ՀՀ մշակույթի նախարարություն եւ պատասխանը ստանալուն պես կներկայացնենք ընթերցողների դատին:

Կույրը մշակեց ԼԻԼԻԹ ԵՐԻԱԶԱՐՅԱՆԸ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՈՅՈՒՆՈՅ

ՀԱՐՈՒԹ ԲԱԼՅԱՆԸ ԵՐԵՎԱՆԵԱՆ ՀԱՆՌԻՍԱՏԵՍԻՆ ՄԵՆԱԶԱՏԵՐԳ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ

Օրերս Մոսի քաղաքում կայացած «ՏԱՐՎԱ ԵՐԿ» ամենամյա փառատոնից հետո, մի խումբ հայ երգիչներ ուղեորվել են Մնասպա՝ համերգային ծրագրով: Իսկ մինչ այդ, «ՏԱՐՎԱ ԵՐԿ» փառատոնին մասնակցելու համար ԱՄՆ-ից ՌԴ էին մեկնել Արմեն Սիմոնյանը, Նորոն, Հարութ Բայանը «Իրավունքին» հետ գրույցում Հարութ Բայանին ասաց, որ ինչքն ու ՌԴ մեկնած գործընկերները դրական լիցքերով են վերադարձել:

- Փառատոնը առիթ հանդիսացավ հանդիպելու Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցների հետ: Շատ դրական լիցքերով՝ ջերմ ու հաճելի մթնոլորտ էր տիրում: Ես անձամբ հանդես եկա «Love me» նոր ձայնակավառակում ներառված երգերի կատարմամբ:

- **Հարութ, զարնանը ԱՄՆ-ում կայացավ Ձեր մենահամերգը, հանդիպեցիք Ձեր ամերիկյան հանդիսատեսին, ամիսներ անց՝ ՌԴ-ի հանդիսատեսի հետ, որտեղ տարբերություն նկատեցիք հանդիսատեսի միջև:**

- Հանդիսատեսը երբեք տարբեր չի լինում: Հայը որտեղ էլ ապրի, ունենում է իր յուրահատուկ երաժշտական ճաշակն ու առանձնահատուկ վերաբերմունքը դեպի հայ երգը:

- **Իսկ չե՞ք կարծում, որ հերթը երեսույնյան հանդիսատեսին է, առաջիկայում հնարավոր է Ձեզ տեսնենք երեսույնյան մենահամերգով:**

- Հնարավոր է, դեռես ժամկետներ մշտել չեմ կարող, բայց երեսույնյան մենահամերգ նախատեսված է: Մինչ այդ, պատրաստ կլինի ԱՄՆ-ի DOLBY-ի կինոթատրոնում կայացած մենահամերգի DVD տարբերակը: Կարող եմ երեսույնյան հանդիսատեսին, երկրպագուներին, ուրախ կլինեմ մեր հանդիպման համար:

ԼԻԼԻԹ ԵՐԻԱԶԱՐՅԱՆԸ

ՆԱՍՏԱՍԻՎ ԿԻՆՍԿԻ. «ԵՐԲ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՋ ՄՈՏ Է ԳԱԼԻՍ, ՊԵՏԵ Է ԵՐԿՈՒ ԶԵՆՔՈՎ ԸՆԴՈՒՆԵՆ ԱՅՆ»

ՆԱՍՏԱՍԻՎ ԿԻՆՍԿԻ առաջին անգամ է գտնվում Հայաստանում: Այդ մասին կինոդերասանուհին հայտնեց նորաբաց «Հայաստան» կինոթատրոնում, որտեղ նրան ընդունեցին ջերմ ծափերով, ծաղկեփնջերով ու կարմիր գորգով: «Այս ամենը պարզապես հիանալի է: Ինձ շատ հաճելի է գտնվել այստեղ: Ենթարակալ եմ շատ ջերմ ընդունելության համար: Չեզամից շատ բան ունեմ սովորելու»,- իր խոսքում ասաց Ն. Կինսկին՝ հավելելով, որ յուրահատուկ է գտնվել մեկ վայրում Օրնելա Մուտիի հետ:

Խոսելով ցուցադրվող «Ոսկե ծիրան» 12-րդ կինոփառատոնի շրջանակներում «Տեսա» ֆիլմի մասին, կինոդերասանուհին ասաց, որ ֆիլմի հերոսուհին դժվարությունների միջով է անցնում՝ հաջողության հասնելու համար: «Հաջողություններ շատ են եղել իմ կյանքում: Երբ հաջողությունը ջեզ մոտ է գալիս՝ պետք է երկու ձեռքով ընդունես այն: Գժվար է միշտ երիտասարդ մնալն ու դժվարություններ հաղթահարելը. միշտ կա սայթաքելու վտանգը: Պետք է շատ զգույշ լինել»,- նկատեց նա:

Նշենք, որ կինոդերասանուհին իր խոսքից հետո լքեց դահլիճը՝ խոստանալով վերադառնալ. «Տեղս, խնդրում եմ պահեք»,- փոքր-ինչ հուզված արտաբերեց Նաստասիան:

ՎԱԿՍ ՄՈՒՐԱԳԱՆ

